ԻՆՉ Է ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մտավոր
Սեփականության
Համաշխարհային
Կազմակերպություն (ՄՍՀԿ)

Սույն գրքույկը թարգմանվել և վերարտադրվել է հեղինակային իրավունքի իրավատեր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ) թույլտվությամբ՝ անգլերեն բնօրինակի հիման վրա: ՄՄՀԿ քարտուղարությունը պարտավորություն և պատասխանատվություն չի կրում թարգմանության կամ տվյալների որևէ փոփոխության համար:

ԻՆՉ Է ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բովանդակություն

էջ

Ինչ է մտավոր սեփականությունը 2

Ինչ է արտոնագիրը 5

Ինչ է ապրանքային նշանը 8

Ինչ է արդյունաբերական նմուշը 12

Ինչ է աշխարհագրական նշումը 14

Ինչ է հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները 18

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը 22

ԻՆՉ է ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է մտավոր սեփականությունը

Մտավոր սեփականությունն առնչվում է մարդու մտավոր գործունեության արդյունքներին, ինչպիսիք են՝ գյուտերը, գրական և գեղարվեստական ստեղծագործությունները, առեւտրում օգտագործվող նշանները, անվանումներն ու պատկերները: Մտավոր սեփականությունը բաժանվում է երկու հիմնական ոլորտի՝

- **Արդյունաբերական սեփականություն,** որ ներառում է գյուտերը, ապրանքային նշանները, արդյունաբերական նմուշները և աշխարհագրական նշումները:

- **Հեղինակային իրավունք,** որ ներառում է գրական ստեղծագործությունները՝ վեպերը, պոեմներն ու դրամաները, ֆիլմերը, երաժշտական ստեղծագործությունները, արվեստի ստեղծագործությունները՝ գծանկարները, նկարները, լուսանկարներն ու քանդակները, ինչպես նաեւ ճարտարապետական ստեղծագործությունները: Հարակից իրավունքները ներառում են՝ կատարողների իրավունքներն իրենց կատարումների, հնչյունագիր արտադրողների իրավունքներն իրենց ամրագրած հնչյունագրերի և հեռարձակող կազմակերպությունների իրավունքներն իրենց պատրաստած ռադիո և հեռուստատեսային ծրագրերի նկատմամբ:

Որոնք են մտավոր սեփականության իրավունքները

Մտավոր սեփականության իրավունքները նման են ցանկացած այլ սեփականության իրավունքի. դրանք թույլ են տալիս հեղինակին կամ արտոնագրի, ապրանքային նշանի սեփականատիրոջը գումար վաստակել իրենց ստեղծագործություններից կամ մտավոր գործունեության արդյունքներից: Այս իրավունքները սահմանված են Մարդու իրավունքների համաշխարհային հռչակագրի 27-րդ հոդվածում, որն ամրագրում է գիտական, գրական կամ գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ անձնական եւ գույքային իրավունքներից օգտվելու իրավունքը:
Մտավոր սեփականության կարևորությունն առաջին անգամ ճանաչվեց

Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայով (1883թ.) և Գրական ու գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայով (1886թ.): Երկու կոնվենցիաներն էլ կառավարվում են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) կողմից:

Ինչու խթանել և պահպանել մտավոր սեփականությունը

Դրա համար կան մի քանի անվիճելի պատճառներ: Առաջին. մարդկության առաջընթացն ու բարեկեցությունը հիմնված են տեխնոլոգիայի և մշակույթի բնագավառներում նոր ստեղծագործություններ ստեղծելու՝ մտավոր կարողության վրա: Երկրորդ. նոր ստեղծագործությունների իրավական պահպանությունը խթանում է լրացուցիչ ռեսուրսների ընդլայնումն ու զարգացումը: Երրորդ. մտավոր սեփականության պահպանությունն ու ոլորտի զարգացումը նպաստում են տնտեսության աճին, ստեղծում են նոր աշխատատեղեր և արդյունաբերության նոր ճյուղեր՝ էլ ավելի բարեկեցիկ դարձնելով մարդկանց կյանքը:

Մտավոր սեփականության արդյունավետ եւ հուսալի համակարգն օգնում է բոլոր երկրներին հասկանալու, որ մտավոր սեփականության ներուժը տնտեսական զարգացման և սոցիալական ու մշակութային բարեկեցության հզոր գործիք է: Մտավոր սեփականության համակարգն օգնում է նորարարի և հանրության շահերի միջև հավասարակշռության պահպանմանը՝ ստեղծելով մի միջավայր, ուր ստեղծագործական ու նորարարական գործունեությունը կարող է ծաղկել հօգուտ բոլորի:

ԻՆՉ Է ԱՐՏՈՆԱԳԻՐԸ

Ինչ առավելություններ են տալիս մտավոր սեփականության իրավունքները շարքային մարդուն:

Մտավոր սեփականության իրավունքները փոխհատուցում են մարդուն իր ստեղծագործական աշխատանքի և ներդրած ջանքերի համար, որոնք էլ, իրենց հերթին, նպաստում են մարդկային մտքի զարգացմանը: Բերենք մի քանի օրինակ.

- բազմամիլիարդ արժողության ֆիլմերի, հնչյունագրերի, հրատարակչական գործի և համակարգչային ծրագրերի արդյունաբերությունը, որոնք հաճույք են պարգևում աշխարհի միլիոնավոր մարդկանց, գոյություն չէին ունենա առանց հեղինակային իրավունքի պահպանության:
- Առանց ապրանքային նշանների միջազգային հուսալի պահպանության սպառողները հնարավորություն չէին ունենա վստահորեն գնել ապրանքներ կամ օգտվել ծառայություններից և խուսափել կեղծված անօրինական արտադրված ապրանքներից:
- Առանց արտոնագրային համակարգի սահմանած իրավունքների գիտնականներն ու գյուտարարները շահագրգռված չէին լինի ստեղծելու նոր ու արդյունավետ արտադրանքներ սպառողների համար:



Ինչ է արտոնագիրը:

Արտոնագիրը բացառիկ իրավունք է տալիս գյուտի նկատմամբ, որը ցանկացած բնագավառի արտադրանք կամ ինչ որ բան անելու եղանակ է կամ առաջարկում է խնդրի նոր տեխնիկական լուծում: Արտոնագիրը պահպանում է արտոնագրատիրոջ իրավունքը գյուտի նկատմամբ:

Պահպանությունը տրվում է սահմանափակ ժամանակահատվածով, սովորաբար՝ 20 տարով:

Ինչպիսի պահպանություն է տրամադրում արտոնագիրը

Արտոնագրային պահպանություն նշանակում է, որ առանց արտոնագրատիրոջ համաձայնության գյուտը առևտրային նպատակներով չի կարող պատրաստվել, օգտագործվել, տարածվել կամ վաճառվել: Այս արտոնագրային իրավունքները, սովորաբար, պաշտպանվում են դատական կարգով: Շատ համակարգերում դատարաններն իրավունք ունեն դադարեցնել արտոնագիրը խախտող գործողությունները: Եվ հակառակը, դատարանը կարող է արտոնագիրն անվավեր ճանաչել երրորդ կողմի հիմնավորված ապացույցների հիման վրա:

Ինչ իրավունքներ ունի արտոնագրատերը

Արտոնագրատերն իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց արտոնագրված գյուտի օգտագործումը մինչև արտոնագրի պահպանության ժամկետի ավարտը: Արտոնագրատերը կարող է թույլատրել կամ լիցենզիա տալ այլ անձանց օգտագործելու գյուտը՝ փոխհամաձայնեցված պայմաններով: Արտոնագրատերը կարող է նաև վաճառել գյուտի նկատմամբ իր իրավունքները մեկ ուրիշի, ով տվյալ դեպքում կդառնա արտոնագրի նոր սեփականատերը: Արտոնագրի ժամկետը լրանալուն պես, պաշտպանությունն ավարտվում է, և գյուտը դառնում է հանրային սեփականություն, այսինքն, սեփականատերն այլևս զրկվում է գյուտի նկատմամբ բացառիկ իրավունքներից, իսկ գյուտը մատչելի է դառնում երրորդ անձանց՝ արդյունաբերական շահագործման համար:

Ինչու են արտոնագրերն անհրաժեշտ

Արտոնագրերը խրախուսում են անհատներին իրենց ստեղծագործական ներդրման համար և նյութական փոխհատուցում են ապահովում նրանց՝ իրենց գյուտերը առևտրային նպատակով օգտագործելու համար: Սա նաև խթան է հանդիսանում նորարարության զարգացման համար, որը բարձրացնում է մարդկանց բարեկեցությունը:

Ինչ դեր ունեն արտոնագրերն առօրյա կյանքում

Արտոնագրված գյուտերը, հիրավի, ներթափանցել են մարդկային կյանքի ցանկացած բնագավառ. սկսած էլեկտրական լուսավորությունից (էդիսոնի և Սվենի կողմից արտոնագրված) և պլաստիկատից (Բեքլենդի կողմից արտոնագրված) մինչև գնդիկավոր ծայրով գրիչները (Բիրոյի կողմից արտոնագրված) և միկրոպրոցեսորները (օրինակ՝ Intel-ի կողմից արտոնագրված): Արտոնագրատերերն էլ պարտավորվում են հրապարակայնորեն բացահայտել իրենց գյուտի վերաբերյալ տեղեկատվությունը, որպեսզի հարստացնեն տեխնիկական գիտելիքի համընդհանուր պաշարն աշխարհում: Հանրային գիտելիքի մշտապես ավելացող պաշարը խրախուսում է մյուսներին ստեղծագործել և զբաղվել նորարարությամբ:

Այսպիսով, արտոնագրերը ոչ միայն պահպանություն են տրամադրում սեփականատիրոջը, այլև արժեքավոր տեղեկատվության և ոգեշնչման աղբյուր են հանդիսանում հետազոտողների և գյուտարարների գալիք սերունդների համար:

Ինչպես է տրվում արտոնագիրը

Արտոնագիր ստանալու համար նախ հարկավոր է արտոնագրի հայտ լրացնել: Արտոնագրային հայտում սովորաբար նշվում է գյուտի անվանումը, ինչպես նաև գյուտին վերաբերող տեխնիկայի բնագավառը. այստեղ պետք է ներառվեն նաև գյուտի էության բնութագիրն ու գյուտի նկարագրությունը՝ անհրաժեշտ մանրամասներով, պարզ և հստակ շարադրված, այնպես, որ տվյալ բնագավառին միջին մակարդակով ծանոթ մարդը կարողանա օգտագործել կամ վերարտադրել գյուտը: Գյուտի էությունն ավելի հստակ բացահայտելու նպատակով այդպիսի նկարագրությունը սովորաբար ուղեկցվում է դիտողական նյութերով (գծագրեր, սխեմաներ կամ դիագրամներ): Հայտի մեջ նշվում են նաև տարբեր «պահանջներ», ասենք՝ տեղեկատվություն արտոնագրով տրամադրված պահպանության ծավալի մասին և այլն:

Որ գյուտերն են ենթակա պահպանության

Ընդհանուր առմամբ, արտոնագրով պահպանվելու համար գյուտը պետք է բավարարի հետևյալ պայմանները. այն պետք է լինի գործնականում կիրառելի, ունենա նորարարության մաս, այսինքն՝ որևէ նոր բնորոշ գիծ, որը հայտնի չէ տեխնիկայի տվյալ բնագավառում առկա գիտելիքի պաշարում: Գիտելիքի առկա այդ պաշարը կոչվում է «տեխնիկայի մակարդակ»: Գյուտը պետք է ունենա գյուտարարական մակարդակ, որը չի կարող բացահայտվել տվյալ տեխնիկայի բնագավառի միջին գիտելիքի տեր անձի կողմից: Եվ, վերջապես, այն պետք է «արտոնագրաունակ» լինի ՀՀ օրենսդրության համաձայն: Շատ երկրներում գիտական տեսությունները, մաթեմատիկական մեթոդները, բույսերի տեսակները կամ կենդանիների ցեղատեսակները, բնական նյութերի հայտնագործությունները, տնտեսության կազմակերպման և ղեկավարման մեթոդները կամ բժշկական բուժումների մեթոդները (բայց ոչ բժշկական արտադրանքի) որպես կանոն արտոնագրաունակ չեն համարվում:

Ով է տալիս արտոնագիրը

Արտոնագիրը տրվում է Արտոնագրային ազգային գրասենյակի կամ տարածքային գրասենյակի կողմից, որն աշխատում է մի քանի երկրների համար, ինչպես, ասենք, Եվրոպական արտոնագրային գրասենյակը (EPO) և Մտավոր սեփականության աֆրիկյան կազմակերպությունը (OAPI): Նմանատիպ տարածքային համակարգերի շրջանակներում հայտատուն գյուտի պահպանություն է խնդրարկում մեկ կամ մեկից ավելի երկրներում, և յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում գյուտին պահպանություն տալ թե՝ չտալ իր երկրի տարածքում: ՄՍՀԿ կողմից կառավարվող Արտոնագրային համագործակցության համաձայնագիրը (PCT) հնարավորություն է տալիս լրացնելու արտոնագիր ստանալու միջազգային մեկ հայտ, որը նույն ազդեցությունն ունի, ինչ նշված երկրներից յուրաքանչյուրում լրացված ազգային հայտը:
Պահպանություն խնդրարկող հայտատուն կարող է ներկայացնել մեկ հայտ և պահպանություն խնդրարկել համաձայնագրին անդամ այն երկրներում որտեղ ցանկանում է պահպանություն ստանալ:

ԻՆՉ է ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ

Ինչ է ապրանքային նշանը

Ապրանքային նշանը տարբերակիչ նշան է, որն առեւտրում տարբերում է որևէ անձի կամ ձեռնարկության ապրանքները և ծառայությունները այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից: Ապրանքային նշանը ծագել է դեռ այն ժամանակներից, երբ արհեստավորներն իրենց ստորագրությունները կամ «նշանները» դնում էին իրենց կողմից ստեղծված գեղարվեստական կամ լայն սպառման ապրանքների վրա: Ժամանակի ընթացքում այդ նշանների հիման վրա ստեղծվեց ապրանքային նշանների գրանցման և պահպանության այսօրվա համակարգը:

Համակարգն օգնում է սպառողներին ճանաչելու և ձեռք բերելու ապրանքներ կամ ծառայություններ, որոնց ծագումն ու որակը, որը մատնանշված է նրանց տարբերակիչ ապրանքային նշաններով, ամենաբարձր մակարդակով բավարարում են իրենց կարիքները:

Որն է ապրանքային նշանի նշանակությունը

Ապրանքային նշանի պահպանությունը նշանի սեփականատիրոջը տրամադրում է նշանն օգտագործելու, իր ապրանքները կամ ծառայությունները այլ անձանց ապրանքներից ու ծառայություններից տարբերելու կամ վճարի դիմաց այլ անձանց նշանի օգտագործման թույլատվություն տալու բացառիկ իրավունք: Ապրանքային նշանի պահպանության ժամկետը տարբեր է, սակայն սահմանված ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարաձգվել՝ համապատասխան տուրքերը վճարելու դեպքում:

Ապրանքային նշանի պաշտպանությունը հիմնականում իրականացնում են դատարանները, որոնք շատ երկրներում իրավասու են արգելելու ապրանքային նշանի անօրինական օգտագործումը: Ավելի լայն իմաստով, ապրանքային նշանները նպաստում են ձեռնարկատիրության զարգացմանը՝ լայն ճանաչում և ֆինանսական օգուտ բերելով դրանց սեփականատերերին: Ապրանքային նշանների պահպանությունը կանխում է նաև անբարեխիղճ մրցակիցների փորձերը, նրանց թվին են դասվում կեղծ ապրանք արտադրողները, որոնք շփոթության աստիճան նման կամ կեղծ ապրանքային նշաններն օգտագործում են իրենց ցածրորակ ապրանքները կամ ծառայությունները իրացնելու նպատակով:

Համակարգը հմուտ և ձեռներեց մարդկանց հնարավորություն է տալիս հնարավորինս արդար պայմաններում արտադրելու և իրացնելու ապրանքներ և ծառայություններ, ինչն էլ իր հերթին նպաստում է միջազգային առևտրի զարգացմանը:

Ապրանքային նշանների ինչպիսի տեսակներ կարող են գրանցվել

Հնարավորությունները գրեթե անսահմանափակ են: Ապրանքային նշանները կարող են լինել մեկ կամ մի քանի բառերի, տառերի և թվերի համակցություն: Դրանք կարող են բաղկացած լինել գծապատկերներից, սիմվոլներից, եռաչափ նշաններից, ինչպես, ասենք, ապրանքների ձևը և փաթեթավորումը, ձայնային նշաններից՝ երաժշտություն կամ ձայնային հնչյուններ, բույրերից կամ գույներից, որոնք օգտագործվում են որպես տարբերակիչ հատկություններ:

Ապրանքների կամ ծառայությունների առևտրային ծագումը նույնականացնող ապրանքային նշանների, գոյություն ունեն նշաններից բացի մի քանի այլ խմբեր: Կոլեկտիվ նշանների սեփականատերեր կարող են լինել ասոցիացիաները, որոնց անդամներն օգտագործում են այդ նշանները ասոցիացիայի սահմանած որակին կամ այլ պահանջներին համապատասխան: Այդպիսի ասոցիացիաների օրինակներ են հաշվապահների, ինժեներների կամ ճարտարապետների ասոցիացիաները:

Հավաստագրային նշանները տրվում են սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում, սակայն դրանց օգտագործումը չի սահմանափակվում այս կամ այն կազմակերպությանը անդամակցությամբ: Դրանք կարող են տրվել ցանկացած անձի, ով կապացուցի, որ իր արտադրած ապրանքները համապատասխանում են որոշակի սահմանված չափանիշների: Որպես հավաստագրային նշանի օրինակ կարելի է բերել միջազգայնորեն ընդունված “ISO 9000” որակի չափանիշները:

Ինչպես է գրանցվում ապրանքային նշանը

Առաջին. պետք է ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացնել ապրանքային նշանների ազգային կամ համապատասխան տարածքային գրասենյակ: Հայտը պետք է պարունակի հայտարկվող նշանի պատկերը, այդ թվում՝ գույնի, ձևի կամ եռաչափ բոլոր հատկանիշները: Հայտում պետք է նշվի նաև այն ապրանքների կամ ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը: Որպեսզի նշանը պահպանվի որպես ապրանքային նշան կամ այլ տեսակի նշան, այն պետք է համապատասխանի որոշակի պայմանների:

Ապրանքային նշանը պետք է լինի հստակ տարբերակվող, որպեսզի սպառողները կարողանան տարբերել այն որպես որոշակի ապրանքներին բնորոշ ապրանքային նշան, ինչպես նաև չշփոթեն այն այլ ապրանքների ապրանքային նշանների հետ: Այն չպետք է շփոթության մեջ գցի կամ խաբի սպառողներին, ոչ էլ հակասի հասարակության շահերին ու բարոյական նորմերին:

Բացի այդ, խնդրարկվող իրավունքները չեն կարող նույնը լինել կամ նման լինել այն իրավունքներին, որոնք արդեն տրվել են մեկ այլ նշանի սեփականատիրոջ: Սա որոշվում է ազգային գրասենյակի անցկացրած որոնման կամ փորձաքննության արդյունքում կամ էլ երրորդ կողմի առարկությունների քննարկման հիման վրա, ովքեր պահանջ են ներկայացրել նման կամ նույն իրավունքների համար:

Որ տարածքներում է պահպանվում ապրանքային նշանը

Աշխարհի գրեթե բոլոր երկրները գրանցում և պահպանում են ապրանքային նշանները:
Ազգային կամ տարածքային յուրաքանչյուր գրասենյակ ունի ապրանքային նշանների գրանցամատյան, որը պարունակում է բոլոր հայտերի գրանցումների և երկարաձգումների վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը՝ երրորդ կողմի համար հեշտացնելով փորձաքննությունը, որոնումը և հնարավոր առարկությունները: Սակայն այսպիսի գրանցման գործողությունը սահմանափակվում է այն երկրի տարածքով, որտեղ այն գրանցվել է (կամ, տարածքային գրանցման դեպքում՝ համապատասխան երկրների տարածքներով):

Ազգային կամ տարածքային յուրաքանչյուր գրասենյակում առանձին-առանձին գրանցումից խուսափելու նպատակով, ՄՍՀԿ-ն վարում է նշանների միջազգային գրանցման համակարգ:

Այս համակարգը կառավարվում է երկու համաձայնագրերով.
Նշանների միջազգային գրանցման վերաբերյալ Մադրիդյան համաձայնագրով և Մադրիդյան արձանագրությամբ: Անձը, ով կապված է (ազգությամբ, բնակության վայրով կամ աշխատանքի վայրով) այս համաձայնագրերից մեկին կամ երկուսին էլ անդամ երկրներից որևէ մեկի հետ, կարող է տվյալ երկրի ապրանքային նշանների գրասենյակ հայտ ներկայացնելու կամ գրանցման հիման վրա ստանալ միջազգային գրանցում, որը կգործի Մադրիդյան միության մի քանի կամ բոլոր անդամ-երկրներում:

ԻՆՉ Է ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԸ



Watch: Courtesy Swatch AG

Swiss Army Knife: courtesy Victorinox Ltd

Ինչ է արդյունաբերական նմուշը

Արդյունաբերական նմուշը որևէ իրի արտաքին տեսքի զարդանախշային կամ գեղագիտական լուծումն է: Նմուշը կարող է ծավալային լինել, ինչպես, ասենք, իրի ձևը կամ մակերևույթը, կամ երկչափ հատկանիշներ ունենալ, ինչպես, օրինակ՝ նախշեր, գծեր կամ գույներ:

Արդյունաբերական նմուշներ են արդյունաբերական և տնայնագործական բազմազան արտադրանքները՝ տեխնիկական և բժշկական սարքավորումներից մինչև ժամացույցները, զարդերը և այլ թանկարժեք իրերը, տնային օգտագործման առարկաներից և էլեկտրական սարքավորումներից մինչև ավտոմեքենաներն ու ճարտարապետական կառույցները, տեքստիլ արդյունաբերությունից մինչև հանգստի ու ժամանցի իրերը:

Երկրների մեծ մասի ազգային օրենքներով պահպանվում է այն արդյունաբերական նմուշը, որը նոր է կամ ինքնատիպ և ոչ ֆունկցիոնալ:
Սա նշանակում է, որ արդյունաբերական նմուշը նախ և առաջ գեղագիտական բնույթ ունի, իսկ տվյալ նմուշը ներառող իրի տեխնիկական հատկանիշները պահպանության ենթակա չեն:

Ինչու պահպանել արդյունաբերական նմուշները

Արդյունաբերական նմուշներն իրը գրավիչ և հետաքրքիր են դարձնում. արդյունքում բարձրանում է ապրանքի առևտրային արժեքը և շուկայում դրա իրացման հավանականությունը:

Երբ արդյունաբերական նմուշը պահպանվում է, սեփականատերը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ով գրանցել է նմուշը, բացառիկ իրավունք է ձեռք բերում արգելելու երրորդ անձանց նմուշի անօրինական վերարտադրումը կամ նմանակումը: Դա նպաստում է կատարած ներդրման դիմաց արդարացի վարձատրություն ստանալուն: Պահպանության արդյունավետ համակարգն օգտակար է նաև սպառողների և հանրության լայն շրջանակների համար, քանի որ ապահովում է բարեխիղճ մրցակցություն և արդար առևտուր, ինչպես նաեւ նպաստում է ստեղծագործական գործունեության զարգացմանն ու գրավում սպառողի ուշադրությունը գեղագիտական ապրանքների նկատմամբ:

Արդյունաբերական նմուշների պահպանությունը նպաստում է տնտեսության զարգացմանը՝ խրախուսելով ստեղծագործական գործունեությունը արդյունաբերական և տնայնագործական արտադրության ճյուղերում, ինչպես նաև ավանդական արվեստի և արհեստների բնագավառներում: Դրանք էլ, իրենց հերթին, նպաստում են առևտրային գործունեության ընդլայնմանն ու ազգային արտադրատեսակների արտահանմանը:

Արդյունաբերական նմուշների ստեղծումն ու պահպանումը համեմատաբար հեշտ է և ոչ թանկ: Դրանց ստեղծումը մատչելի է փոքր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև արվեստագետներին և արհեստավորներին թե՛ արդյունաբերորեն զարգացած և թե՛ զարգացող երկրներում:

Ինչպես են պահպանվում արդյունաբերական նմուշները

Շատ երկրներում, որպեսզի արդյունաբերական նմուշը պահպանվի արդյունաբերական նմուշների մասին օրենքով, այն պետք է գրանցվի: Որպեսզի նմուշը գրանցվի՝ այն պետք է լինի «նոր» և «ինքնատիպ»: Տարբեր երկրներ տարբեր կերպ են սահմանում այս հասկացությունները, ինչպես նաև տարբեր է գրանցման գործընթացը: Սովորաբար, «նոր»՝ նշանակում է, որ մինչ այդ գոյություն չի ունեցել հենց այդպիսի կամ նմանատիպ նմուշ: Գրանցվելուց հետո տրվում է գրանցման վկայագիր: Սովորաբար, դրա պահպանության ժամկետը 5 տարի է, բայց կարող է երկարաձգվել ընդհանուր առմամբ մինչև 15 տարին լրանալը: Կախված ազգային օրենսդրությունից և նմուշի տեսակից, արդյունաբերական նմուշը կարող է պահպանվել նաև հեղինակային իրավունքով՝ որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություն:

Որոշ երկրներում արդյունաբերական նմուշը կարող է պահպանվել միաժամանակ եւ՛ հեղինակային իրավունքի մասին օրենքով, և՛ արդյունաբերական նմուշների մասին օրենքով:

Որոշ երկրներում հեղինակային իրավունքն ու արդյունաբերական նմուշների պահպանությունը փոխադարձ բացառում են մեկը մյուսին. եթե սեփականատերը ընտրում է պահպանության մի տեսակը, ապա չի կարող օգտվել մեկ այլ պահպանության տեսակից:

Որոշակի հանգամանքներում արդյունաբերական նմուշը կարող է նաև պահպանվել անբարեխիղճ մրցակցության մասին օրենքով, սակայն այս դեպքում պահպանության պայմանները, իրավունքներն ու իրավական պահպանության միջոցները կարող են միանգամայն տարբեր լինել:

Որ տարածքներում է պահպանվում արդյունաբերական նմուշը

Ընդհանրապես, արդյունաբերական նմուշի պահպանությունը սահմանափակվում է այն երկրի տարածքով, որտեղ այն գրանցվել է: Արդյունաբերական նմուշների միջազգային դեպոզիտի վերաբերյալ Հաագայի համաձայնագրով, որը կառավարվում է ՄՍՀԿ-ի կողմից, առաջարկվում է միջազգային գրանցման նոր ընթացակարգ: Հայտատուն կարող է միջազգային մեկ հայտ ներկայացնել այս համաձայնագրի անդամ երկրներից որևէ մեկի ազգային գրասենյակ կամ՝ ՄՍՀԿ: Այս դեպքում նմուշը պահպանություն կստանա հայտատուի կողմից նշված՝ համաձայնագրի անդամ-երկրներում:

ԻՆՉ է ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄԸ

Ինչ է աշխարհագրական նշումը

Աշխարհագրական նշումը մի նշան է, որն օգտագործվում է այն ապրանքների վրա, որոնք ունեն որոշակի աշխարհագրական ծագում և այնպիսի հատկություններ կամ ճանաչում, որոնք բնորոշ են ծագման տվյալ վայրին:
Ընդհանուր առմամբ, աշխարհագրական նշումը բաղկացած է ապրանքների ծագման վայրի անունից: Գյուղատնտեսական ապրանքներին բնորոշ են այնպիսի հատկանիշներ, որոնք պայմանավորված են դրանց արտադրության վայրով և որոնց վրա իրենց ազդեցությունն են թողնում տեղանքին հատուկ աշխարհագրական գործոնները, ինչպիսիք են կլիման և հողը: Նշանի՝ որպես աշխարհագրական նշում օգտագործումը կախված է ազգային օրենսդրությունից և սպառողների ընկալումից: Աշխարհագրական նշումն օգտագործվում է գյուղատնտեսական բազմաթիվ ապրանքների վրա, ինչպես, օրինակ, «Tuscany»-ը՝ Իտալիայի որոշակի տարածքում արտադրված ձիթապտղի ձեթի, կամ «Roquefort» -ը՝ Ֆրանսիայի որոշակի շրջանում արտադրված պանրի համար:

Աշխարհագրական նշումների օգտագործումը չի սահմանափակվում գյուղատնտեսական ապրանքներով: Դրանք կարող են ընդգծել նաև արտադրանքի այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են արտադրանքի ծագման վայրին բնորոշ մարդկային գործոնի ազդեցությամբ, մասնավորապես՝ արտադրանքի պատրաստման հատուկ հմտություններն և ավանդույթները:

Ծագման վայրը կարող է լինել գյուղ կամ քաղաք, շրջան կամ երկիր: Օրինակ՝ Շվեյցարիան (“Switzerland” կամ “Swiss”), որը շատ երկրներում ընկալվում է որպես աշխարհագրական նշում Շվեյցարիայում արտադրված ապրանքների, հատկապես ժամացույցների համար:

Ինչ է ծագման տեղանունը

Ծագման տեղանունը աշխարհագրական նշման տեսակ է, որն օգտագործվում է այն ապրանքների վրա, որոնք ունեն աշխարհագրական միջավայրին բացառապես կամ էապես բնորոշ յուրահատուկ որակ: Աշխարհագրական նշում հասկացությունն ընդգրկում է նաեւ ծագման տեղանունը: «Bordeaux»-ը՝ Ֆրանսիայի Բորդո կոչվող շրջանում արտադրվող գինու համար, «Habana»-ն՝ Կուբայի Հավանա անվանումը կրող շրջանում աճող ծխախոտի համար, «Tequila»-ն՝ Մեքսիկայի որոշ շրջաններում արտադրվող սպիրտի համար այնպիսի ծագման տեղանունների օրինակներ են, որոնք պահպանվում են «Ծագման տեղանունների պահպանության եւ դրանց միջազգային գրանցման մասին» Լիսաբոնի համաձայնագրի անդամ երկրներում:

Որն է աշխարհագրական նշումների պահպանության անհրաժեշտությունը

Աշխարհագրական նշումները սպառողների կողմից ընկալվում են որպես արտադրանքի ծագումն ու որակը որոշելու միջոց: Այդ նշումներից շատերը ձեռք են բերել որակյալ արտադրանքի համբավ, և դրանք, անհրաժեշտ ձևով պահպանված չլինելու դեպքում, կարող են օգտագործվել անբարեխիղճ գործարարարների կողմից: Կեղծված աշխարհագրական նշումների օգտագործումը՝ դրանք օգտագործելու թույլտվություն չունեցող անձանց կողմից, ինչպես, օրինակ՝ «Darjeeling»-ը թեյի այն տեսակի համար, որը չի աճեցվել Darjeeling-ի մշականոցներում, վնաս է հասցնում ինչպես սպառողներին, այնպես էլ օրինական արտադրողներին: Խաբվելով ու մոլորության մեջ ընկնելով, թե իբր գնում են յուրահատուկ հատկանիշներ ու որակ ունեցող իսկական արտադրանքը սպառնողներն, իրականում, ստանում են դրա անորակ նմանակումը: Օրինական արտադրողները մեծ վնաս են կրում, քանի որ կորցնում են շահութաբեր գործը կամ վնաս է հասցվում իրենց արտադրանքի համբավին:

Որն է աշխարհագրական նշման և ապրանքային նշանի տարբերությունը

Ապրանքային նշանը տարբերակիչ նշան է, որն առեւտրում տարբերում է որևէ անձի կամ ձեռնարկության ապրանքները և ծառայությունները այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից: Ապրանքային նշանը իրավունք է տալիս նշանի սեփականատիրոջը արգելելու այլ անձանց իր նշանի օգտագործումը: Աշխարհագրական նշումը սպառողներին տեղեկացնում է, որ արտադրանքն արտադրվել է որոշակի վայրում և ունի որոշակի հատկություններ, որոնք պայմանավորված են տվյալ տեղանքին բնորոշ հատկանիշներով: Այն կարող է օգտագործվել բոլոր այն արտադրողների կողմից, ովքեր իրենց ապրանքներն արտադրում են տվյալ աշխարհագրական նշման վայրում և որոնց ապրանքներն ունեն տվյալ վայրին բնորոշ հատկանիշներ:

Ինչպես է պահպանվում աշխարհագրական նշումը

Աշխարհագրական նշումները պահպանվում են տարբեր ոլորտներին վերաբերող ազգային օրենքներով, ինչպիսիք են՝ անբարեխիղճ մրցակցության դեմ պայքարի, սպառողների իրավունքների պաշտպանության, հավաստագրային նշանների պահպանության մասին օրենքները կամ աշխարհագրական նշումների պահպանության կամ ծագման տեղանունների մասին հատուկ օրենքները:

Ըստ էության, աշխարհագրական նշումն օգտագործելու թույլտվություն չունեցող անձինք չեն կարող օգտագործել այն, եթե այդպիսի օգտագործումը կարող է շփոթության մեջ գցել հանրությանը արտադրանքի իրական ծագման հարցում: Նման խախտումների դեպքում կիրառվում են տարբեր պատժամիջոցներ՝ չթույլատրված օգտագործումն արգելող դատական վճիռներ, վնասների հատուցում, տուգանքներ կամ կալանք՝ լուրջ խախտումների դեպքում:

Ինչպես են պահպանվում աշխարհագրական նշումները միջազգային ասպարեզում

ՄՍՀԿ կողմից կառավարվող մի շարք պայմանագրեր ապահովում են աշխարհագրական նշումների պահպանությունը, մասնավորապես՝ Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիան (1883թ.) և Ծագման տեղանունների պահպանության և դրանց միջազգային գրանցման մասին Լիսաբոնի համաձայնագիրը:

Ինչ է «սեռային» աշխարհագրական նշումը

Եթե տեղանքի անվանումն օգտագործվում է որպես նշում հատուկ տեսակի ապրանքի համար ծագման տեղանվան փոխարեն, ապա այդ հասկացությունը այլևս որպես աշխարհագրական նշում չի ընդունվում:

Օրինակ, «Dijon Mustard»-ը մանանեխի տեսակ է, որը շատ տարիներ առաջ արտադրվել է Ֆրանսիայի Դիժոն քաղաքում: Սակայն, ժամանակի ընթացքում, այս անվանումը սկսել է նշվել որպես մանանեխի տեսակ, որը արտադրվում է շատ վայրերում: Այստեղից էլ, «Dijon mustard»-ը հիմա սեռային անվանում է և վերաբերում է արտադրանքի տեսակին եւ ոչ թե դրա արտադրման վայրին:

Որն է ՄՍՀԿ-ի դերը աշխարհագրական նշումների պահպանության գործում

ՄՍՀԿ-ն կառավարում է միջազգային մի շարք համաձայնագրեր, որոնք մասամբ կամ ամբողջովին պահպանում են աշխարհագրական նշումները, մասնավորապես՝ Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիան և Ծագման տեղանունների պահպանության և դրանց միջազգային գրանցման մասին Լիսաբոնի համաձայնագիրը: Բացի դրանից, ՄՍՀԿ անդամ-երկրները և շահագրգիռ մյուս կողմերը ՄՍՀԿ նիստերի ժամանակ ուսումնասիրում են աշխարհագրական նշումների միջազգային պահպանության կատարելագործման նոր ուղիներ:

ԻՆՉ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ինչ է հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները

Հեղինակային իրավունքը պահպանում է հեղինակների, նկարիչների և այլ ստեղծագործողների իրավունքները իրենց ստեղծած գրական և գեղարվեստական գործերի նկատմամբ, որոնք սովորաբար կոչվում են ստեղծագործություններ: Հեղինակային իրավունքին սերտորեն կապված են հարակից իրավունքները, որոնք տրամադրում են հեղինակային իրավունքին նմանատիպ իրավունքներ. երբեմն դրանք ավելի սահմանափակ են, և կարճատև է դրանց գործողության ժամկետը: Հարակից իրավունքների սուբյեկտներն են.

- կատարողները (մասնավորապես՝ դերասաններն ու երաժիշտները)՝ իրենց կատարումներով,
- հնչյունագիր արտադրողները (օրինակ՝ տեսաձայնագրություններն ու խտասկավառակները) իրենց ձայնագրություններով,
- հեռարձակող կազմակերպություններն՝ իրենց ծրագրերով:

Հեղինակային իրավունքով պահպանվում են հետեւյալ ստեղծագործությունները՝ վեպերը, բանաստեղծությունները, պիեսները, տեղեկատուները, թերթերը, համակարգչային ծրագրերը, տվյալների բազաները, ֆիլմերը, երաժշտական և պարարվեստի ստեղծագործությունները, նկարները, գծանկարները, լուսանկարները, քանդակները, ճարտարապետական ստեղծագործությունները, գովազդները, քարտեզները, տեխնիկական գծագրերը և այլն, որոնց թիվը սպառիչ չէ:

Ինչ իրավունքներ են տրամադրում հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները

Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները և նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են հեղինակային իրավունքի մասին օրենքով տրամադրվող իրավունքներից: Նրանք օգտվում են իրենց ստեղծագործություններն օգտագործելու կամ երրորդ անձանց փոխհամաձայնեցված պայմաններով դրանց օգտագործման թույլտվություն տալու բացառիկ իրավունքներից: Ստեղծագործության իրավատերը կարող է արգելել կամ թույլատրել.

- ստեղծագործության վերարտադրումը ցանկացած ձևով, ներառյալ դրա տպագրությունն ու ձայնագրությունը,
- ստեղծագործության հրապարակային կատարումը և հանրությանը հաղորդումը,
- ստեղծագործության հեռարձակումը,
- ստեղծագործության թարգմանությունն այլ լեզուներով և
- ստեղծագործության հարմարեցումը, ինչպես, ասենք, վեպի հարմարեցումը ֆիլմի էկրանավորման նպատակով:

Նմանատիպ իրավունքներ, դրանց թվում՝ ամրագրման (ձայնագրման) եւ վերարտադրության իրավունքները տրվում են նաեւ հարակից իրավունքների սուբյեկտներին:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքով պահպանվող ստեղծագործությունների շատ տեսակներ պահանջում են մեծ տպաքանակով վերարտադրություն (օրինակ՝ հրատարակությունները, ձայնագրությունները և ֆիլմերը), հանրությանը հաղորդում և ֆինանսական ներդրումներ:

Ահա թե ինչու հեղինակները հաճախ իրենց ստեղծագործությունների նկատմամբ իրավունքները փոխանցում են այն կազմակերպություններին, որոնք ավելի լավ կարող են գովազդել և տարածել ստեղծագործությունները, փոխարենը պահանջելով փոխհատուցում՝ հեղինակային հոնորարների և վճարումների տեսքով (ստեղծագործությունների օգտագործումից ստացվող եկամուտների տոկոսային փոխհատուցում):

Ինչպես սահմանված է ՄՍՀԿ համապատասխան պայմանագրերում, հեղինակի գույքային իրավունքները գործում են որոշակի ժամանակահատվածում՝ ստեղծագործության ստեղծման կամ դրա ամրագրման օրվանից և շարունակում են գործել հեղինակի մահից հետո ոչ պակաս քան 50 տարի: Ազգային օրենքները կարող են պահպանության ավելի երկար ժամկետներ սահմանել: Այսպիսի պահպանությունը թույլ է տալիս հեղինակներին և նրանց ժառանգներին ու իրավահաջորդներին ֆինանսական օգուտ ստանալ որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Հարակից իրավունքների պահպանության ժամկետն ավելի կարճ է, սովորաբար 50 տարի՝ կատարումից, դրա ամրագրումից կամ հեռարձակումից հետո: Ինչպես հեղինակներն, այնպես էլ կատարողներն ունեն անձնական իրավունքներ:

Դրանք են՝ ստեղծագործության նկատմամբ հեղինակ ճանաչվելու իրավունքը եւ ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը:
Իրավունքները, որոնք տրամադրվում են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքով, կարող են կիրառվել իրավատերերի կողմից տարբեր միջոցների և մեթոդների, ներառյալ քաղաքացիական հայցերի հարուցման, վարչական միջոցների և քրեական պատժամիջոցների կիրառման միջոցով:
Իրավունքների պաշտպանության համար կիրառվում են նաև դատական արգելանքները, օրինախախտ ապրանքների ոչնչացման վերաբերյալ վճիռները, ստուգում անցկացնելու հրամանները և այլն:

Որոնք են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանության առավելությունները

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանությունը խթանում է մարդու ստեղծագործական և նորարարական գործունեության զարգացմանը: Խրախուսելով հեղինակներին, արվեստագետներին և ստեղծագործողներին, բերելով նրանց ճանաչում և նյութական պարգեւատրում, այսպիսի պահպանությունը ակտիվացնում է նրանց գործունեությունն ու խրախուսում ներդրումը՝ հաճախ կրկնապատկելով արդյունքները:

Իրավունքների առկայությունը և կիրառունակությունը ապահովելու միջոցով ձեռնարկություններն ու ընկերությունները կարող են ավելի հեշտությամբ ներդրումներ անել ստեղծագործությունների ստեղծման, զարգացման և տարածման գործում: Սա, իր հերթին, օգնում է ամբողջ աշխարհում մշակույթի, գիտելիքի, ժամանցի և բարեկեցության ամրապնդմանը, ինչպես նաև խթանում է տնտեսական և սոցիալական զարգացմանը:

Հեղինակային իրավունքը և հարակից իրավունքներն ինչպես են զարգանում տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների ոլորտները տեխնոլոգիական ակնհայտ առաջընթացի պայմաններում ընդլայնվել են հսկայական չափերով, որն էլ, իր հերթին, ստեղծագործությունների տարածման նոր ուղիներ է բացել համաշխարհային հաղորդակցության այնպիսի միջոցներով, ինչպիսիք են արբանյակային հեռարձակումը, խտասկավառակները և թվային տեսասկավառակները (DVD): Վերջին զարգացումներից է ստեղծագործությունների տարածումը ինտերնետի միջոցով, որը թվային այդ միջավայրում նոր խնդիրներ է առաջադրում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների ոլորտներին: ՄՍՀԿ-ն ներգրավված է կիբերտարածություններում հեղինակային իրավունքի պաշտպանությանն ուղղված միջազգային քննարկումների մեջ:

Կազմակերպությունը կառավարում է ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի (WCT) և ՄՄՀԿ Կատարումների և հնչյունագրերի (WPPT) պայմանագրերը, որոնք հաճախ անվանում են «ինտերնետային պայմանագրեր»:
Ինտերնետային այս պայմանագրերը պարզաբանում են միջազգային նորմերը, որոնք ուղղված են ինտերնետում ստեղծագործությունների անօրինական օգտագործման կանխմանը:

Ինչպես են կարգավորվում հեղինակային իրավունքն ու հարակից իրավունքները

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանությունը տրամադրվում է ավտոմատ կերպով և կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից և որևէ այլ գործողության կատարումից:
Այնուամենայնիվ, շատ երկրներ իրենց ազգային համակարգերում ստեղծագործությունների կամավոր գրանցման կամ ի պահ հանձնման հնարավորություն են նախատեսում: Այդ համակարգերը, օրինակ, հեշտացնում են ստեղծագործության հեղինակի և սեփականատիրոջ միջև վեճերի լուծման, ֆինանսական գործարքների, վաճառքի, իրավունքների զիջման կամ փոխանցման հարցերը:

Շատ հեղինակներ և կատարողներ հնարավորություն կամ միջոցներ չունեն հետևելու հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավական պահպանությանը, մասնավորապես հաշվի առնելով ամբողջ աշխարհում ավելի լայն տարածում գտնող գրական, երաժշտական և կատարողական իրավունքների օգտագործումը:
Արդյունքում, իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հիմնադրումն ու ամրապնդումը շատ երկրներում անհրաժեշտություն է դարձել:
Այս կազմակերպությունները կարող են իրենց անդամների համար հնարավորություն ստեղծել օգտվելու կազմակերպության վարչական և իրավական խորհրդատվությունից, ինչպես նաև ապահովել ստեղծագործությունների ազգային և միջազգային օգտագործումից ստացված հեղինակային հոնորարների հավաքումն ու բաշխումը: Հնչյունագիր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների որոշ իրավունքներ երբեմն նույնպես կառավարվում են կոլեկտիվ հիմունքներով:

Watch: Courtesy Swatch AG

ԻՆՉ է ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ



Ի՞նչ է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը

1970թ. հիմնադրված Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ) միջազգային կառույց է, որի գործունեությունն ուղղված է ամբողջ աշխարհում ստեղծագործողների և մտավոր սեփականության սեփականատերերի իրավունքների պահպանության ապահովմանը, ինչպես նաև իրենց ստեղծագործական արդյունքների պահպանության միջոցով գյուտարարների ու հեղինակների խրախուսմանն ու ճանաչմանը:

Միջազգային պահպանությունը խթանում է մարդկային ստեղծագործական աշխատանքը՝ ընդլայնելով գիտության և տեխնոլոգիայի սահմաններն ու հարստացնելով գրականության և արվեստի աշխարհը: Մտավոր սեփականության արտադրանքների իրացման համար կայուն միջավայր ապահովելով, այն ավելի սահուն է դարձնում միջազգային առեւտուրը: ՄՍՀԿ-ն սերտորեն համագործակցում է իր անդամ-երկրների և բաղկացուցիչ մյուս կառույցների հետ՝ ապահովելով մտավոր սեփականության այնպիսի ճկուն համակարգ, որը կծառայի ժողովրդի բարգավաճմանն ու բարեկեցությանը՝ ներկա և գալիք սերունդներին օգնելով հասկանալ մտավոր սեփականության ողջ ներուժը:

Ինչպես է ՄՍՀԿ-ն խթանում մտավոր սեփականության պահպանությունը

ՄՍՀԿ-ն Միավորված ազգերի մասնագիտացված կազմակերպություն է և իր անդամ երկրների համար ծառայում է որպես ֆորում՝ մտավոր սեփականության իրավունքների պահպանության կանոնների մշակման ու գործունեության ներդաշնակեցման համար: Արդյունաբերորեն զարգացած շատ երկրներում պահպանության համակարգերը դարերի հնություն ունեն: Դրանց կողքին նորաստեղծ և զարգացող երկրները այսօր ստեղծում են արտոնագրերի, ապրանքային նշանների և հեղինակային իրավունքի մասին իրենց օրենքներն ու համակարգերը: Վերջին տասնամյակում, առևտրի ոլորտի արագ գլոբալիզացիայի պայմաններում, ՄՍՀԿ-ն վճռորոշ առաքելություն է իրականացնում. աջակցում է այդ նոր համակարգերի զարգացմանը՝ պայմանագրեր կնքելու նպատակով բանակցություններ վարելու, իրավական

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (WIPO)

Հասցեն՝
34, chemin des Colombettes
P.O. Box 18 CH-1211 Geneva 20 Switzerland
Telephone: +41 22 338 91 11
Fax: +41 22 733 54 28
e-mail: wipo.mail@wipo.int

կամ Մտավոր սեփականության գործակալություն

Հասցեն՝
Գլխավոր պողոտա, կառավարական 3 շենք
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն
Հեռախոս (+37410) 52 06 73
Ֆաքս (+37410) 54 34 67
էլ-փոստ www.cright@aipa.am

Այցելեք ՄՍՀԿ ինտերնետային կայք
www.wipo.int և պատվիրեք ՄՍՀԿ էլեկտրոնային գրախանութից
www.wipo.int/ebookshop

WIPO Publication No. 450(AR) ***ISBN 978-92-805-1912-9***